ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ, ԱՂՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐՍՏԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱՆՔ

Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի (1974-2008), կազմող՝ Տ. Արարատ քահանա Պողոսյան, խմբագիր՝ Գեորգ Տեր-Վարդանյան, Ս. Էջմիածին, 2012, 480 էջ, (տուպր՝ օֆսեթ 60x84 1/8, ծավալը՝ 30 տպ. մամուլ, կազմը կոշտ, գրաքանակը՝ 300)

Ամենայն Հայոց Կաթողիկոսության Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական գլխավոր պարբերականը «Էջմիածին» ամսագիրն է: Ինչպես Մայր Աթոռի հոգևոր, վանական-վարչական, կրթական-կազմակերպչական պատասխանատու աշխատանքների սկզբնավորությունը, այնպես էլ «Էջմիածին» ամսագրի հրատարակությունը կապվում են Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.-ի անվան եւ գործունեության հետ:

Ամսագիրը լուսաբանում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության, Սփյուռքի եւ ներքին թեմերի եկեղեցական կյանքը, անդրադառնում է միջեկեղեցական հարաբերություններին, միջազգային կրոնական եւ խաղաղության հարցերին՝ կարեւորելով դրանց ոչ միայն ազգային-եկեղեցական, այլեւ միջեկեղեցական, միջպետական նշանակությունը: Ամսագիրն առաջիններից էր, որ Սփյուռքի եւ Հայրենիքի միջեւ ստեղծել է համագործակցության կամուրջ, ջատագովել է ներգաղթը: 1940-ականների վերջերից արտահայտվել է հոգուտ խաղաղության համաշխարհային շարժման ստեղծման, եւ այժմ եւս պարբերաբար անդրադառնում է հիշյալ շարժմանը: Շարունակաբար տպագրում է Հայոց հայրապետների կոնդակները, շրջաբերականները, քարոզները, ճառերը, որոնք գաղափարական, բովանդակային եւ արտահայտչաձեւերի առումով ժամանակի եկեղեցական մատենագիտության գոհարներ են, շոշափում են հայ ազգ-եկեղեցական կյանքի նշանակալի իրադարձություններ (էջ 5):

Այս առումով չափազանց գովելի է, երբ «Էջմիածին» ամսագրի առաջին 30-ամյակի մատենագիտության հրատարակումից հետո Արժանապատիվ Տ. Արարատ քհն. Պողոսյանը հայագետների սեղանին է դնում «Էջմիածին» ամսագրի հաջորդ 35-ամյակի մատենագիտությունը: Հատկապես արժեքավոր են դառնում այս եւ նման աշխատանքները, երբ հաշվի ենք առնում, որ ոչ վաղ անցյալում (Ի. դարի 70-ականներին) սկսվեց

պարբերականների մատենագիտությունների կազմման աշխատանքները: «Էջմիածին» ամսագրի առաջին 30-ամյակի մատենագիտությանը նվիրված գրախոսականում Խ. Աղաջանյանը գրում է. «Գովելի է ո՛չ միայն կատարված աշխատանքի արժեքավորության, այլեւ մեր մշակութային կյանքում կարեւորություն ներկայացնող գործի սկզբնավորումն արմատավորելու իմաստով: Հայտնի է, որ, ունենալով պարբերականների հրատարակման մեծ եւ վաղեմություն ունեցող ավանդներ, մենք չունենք այդ ավանդներին զուգակշռող պարբերականների մատենագիտական ցանկեր: Ահա այս իմաստով է, որ ընդգծվում է հրապարակված աշխատության նշանակությունը»[1]:

«Էջմիածին»-ը «Արարատ» ամսագրի հայագիտական ավանդույթների ժառանգողն ու շարունակողն է, եւ անհրաժեշտաբար ինչպես «Արարատ»-ը, «Էջմիածին»-ը եւս պետք է ունենար իր լիակատար մատենագիտությունը[2], «որովհետեւ պարբերականի մատենագիտությունը, իսկապես, բանալի է, առանց որի նրա պարունակած թանկարժեք նյութի գործածման արդյունավետությունը խիստ ցածր է: Այլ կերպ ասած՝ մատենագիտություն չունեցող պարբերականը նման է գանձարանի, որի դուռը կողպված է, կողպեքն էլ բանալի չունի: Այսինքն՝ ծանրակշիռ եւ լուրջ պարբերականի մատենագիտություն կազմելը նշանակում է նրա բանալիի պատրաստում» (էջ 5):

Գրախոսվող սույն հատորը «Էջմիածին» ամսագրի 35-ամյա շրջանի (1974-2008) օրագրություն-վավերագրումն է: Լինելով «Արարատ» ամսագրի հայագիտական ավանդույթների շարունակողն ու ժառանգողը, մինչեւ օրս ամսագրին իրենց աշխատակցությունն են բերել բազում մեծավաստակ հայագետներ, Մայր Աթոռի շատ ու շատ միաբաններ թե՛ Հայաստանից եւ թե՛ սփյուռքից, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի դասախոսներ, ճարտարապետներ, գիտության եւ արվեստի ներկայացուցիչներ, Պետական համալսարանի Մատենադարանի եւ ԳԱ Ակադեմիայի մտավորականներ եւ անվանի այլ գիտնականներ եւ՛ հայրենիքից եւ թե արտերկրից:

Կարելի է ասել, որ Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագիրն ունի եկեղեցական, կրոնական, պատմական, բանասիրական եւ հայագիտական բնույթ[3]:

Ներկա մատենագիտության կազմող-հեղինակն օրագրության տեսքով ներկայացնում է գրեթե յուրաքանչյուր օրվա իրադարձություն, որոնք դրսեւորվում են այցելությունների (օր.՝ նկարագրություն Ֆ՝ 62), տոնակատարությունների (օր.՝ նկարագրություն Ֆ՝ 949), ժամանակ առ ժամանակ կարդացված դասախոսությունների (օր.՝ նկարագրություն Ֆ՝ 1200), հաճախ հովվապետական եւ հովվական այցելությունների (օր.՝ նկարագրություն Ֆ՝ 2487), Մայր Աթոռ ժամանած հյուրերի (օր.՝ նկարագրություն Ֆ՝

1 **Խ. Աղաջանյան,** «Էջմիածին» ամսագրի մատենագիտական ցանկը, «Էջմիածին», 1974, ԺԲ., էջ 52:

2 «Արարատ» ամսագրի լիակատար (1868-1919) եւ «Էջմիածին» ամսագրի առաջին 30-ամյակի (1944-1973) մատենագիտությունները կազմել է Սեդա Կոծինյանը:

3 Տե՛ս **Նատիրյան Արթուն,** Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի հրատարակության երեսնամյակը, «Էջմիածին», 1975, Բ., էջ 4-21, **Տեր-Միքայելյան Նուբար,** «Էջմիածին» ամսագրի հրատարակման 50-ամյակի առթիվ, «Էջմիածին», 1994, ԺԱ.-ԺԲ., էջ 81-86, Ի գիտություն, «Էջմիածին», 1980, Ա., էջ 27, Գերագույն Հոգեւոր Խորհրդի որոշումը, «Էջմիածին», 1985, Ա., էջ 8:

1062), թեմական առաջնորդների (օր.՝ նկարագրություն Ամ 7198), սփյուռքի նշանավոր գործիչների (օր.՝ նկարագրություն Ամ 1079), բայց առավելապես Մայր Տաճարում եւ Ս. Էջմիածնի տարբեր եկեղեցիներում մատուցած Ս. Պատարագների եւ մատուցող հոգեւորականների մասին տեղեկություններ հաղորդելով (օր.՝ նկարագրություն Ամ 1131): Այս տեղեկությունները, որոնք առաջին հայացքից թվում են երկրորդական, իրականում շատ անհրաժեշտ են դառնում, երբ անհրաժեշտ է լինում անդրադառնալ, որեւէ եկեղեցականի եւ կամ Մայր Աթոռ ժամանած որեւէ բարձրաստիճան եկեղեցականի եւ կամ քաղաքական գործչի կենսագրությանը: Այս տեղեկություններին տիրապետելով է, որ կարողանում ես հետեւել որեւէ մեկի կյանքի ժամանակագրությանը, առանց բուն ամսագրերը ձեռքիդ տակ ունենալու: Հետեւաբար ամսագիրը, Մայր Աթոռի տարեգրությունը լինելով հանդերձ, նաեւ նրա կյանքի օրագրությունն է, որտեղ պատկերված են Մայր Աթոռի ներքին եւ արտաքին կյանքի բոլոր իրադարձությունները՝ օր, ամիս եւ տարի կտրվածքով (էջ 10): Կիրառելով նշյալ սկզբունքը մատենագիտության հեղինակին հաջողվել է, որ միայն մատենագիտությունը ձեռքի տակ ունենալով կարող ես հետեւել ոչ միայն հայրենիքում տեղի ունեցող իրադարձություններին, այլեւ հաշվի առնելով, որ ամսագրի գրեթե յուրաքանչյուր համարում կան հայրապետական կոնդակներ (օր.՝ նկարագրություն Ամ 1164), ողջունագրեր (օր.՝ նկարագրություն Ամ 2284), հեռագրեր (օր.՝ նկարագրություն Ամ 2291), մահագրականներ (օր.՝ նկարագրություն Ամ 2479), Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի եւ այլ եկեղեցիների հոգեւոր պետերի միջեւ փոխանակված գրություններ (օր.՝ նկարագրություն Ամ 2598) եւ տարբեր տոների առիթներով հղված ողջունագրեր (օր.՝ նկարագրություն Ամ 2605), սփյուռքում կատարված՝ օտար միջավայրում հայկական նկարագիրը պահպանելու համար կարեւոր դեր ունեցած տարբեր իրադարձություններ, Սրբոց Վարդանանց եւ Ամենայն Հայոց Հայրապետի անվանակոչության տարեդարձի տոնակատարությունների նկարագրություններ (օր.՝ նկարագրություն Ամ 2746), եկեղեցիների հիմնարկեքներ (օր.՝ նկարագրություն Ամ 3273), Մեծ Եղեռնի տարելիցներին նվիրված գիտաժողովներ (օր.՝ նկարագրություն Ամ 3307), հայ գրի ու գրականության զարգացումը խթանելու եւ այլ միջոցառումներն սփյուռքի գործուն մասնակցությունը եւ այլն «Էջմիածին» ամսագիրը դառնում է նաեւ աշխարհասփյուռ հայության կյանքի տարեգրությունը, որտեղ արձանագրված են նաեւ Մայր հայրենիքի թեմերում կատարված իրադարձությունները՝ ձեռնադրություններ (օր.՝ նկարագրություն Ամ 3398), եպիսկոպոսական պատարագներ (օր.՝ նկարագրություն Ամ 5682), հովվական այցելություններ եւ մեր թեմական-եկեղեցական կյանքի այլ դրսեւորումներ (օր.՝ նկարագրություն Ամ 2942) (էջ 11):

Մատենագիտության մեջ առկա է միջեկեղեցական բոլոր կապերի (օր.՝ նկարագրություն Ամ 3246), սեմինարների (օր.՝ նկարագրություն Ամ 5376), ժողովների (օր.՝ նկարագրություն Ամ 5514), հովվապետերի կամ նրանց ներկայացուցիչների հանդիպումների (օր.՝ նկարագրություն Ամ 5628), Գեւորգյան հոգեւոր ճեմարանի (օր.՝ նկարագրություն Ամ 5632), վերջին շրջանում նաեւ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի (օր.՝ նկարագրություն Ամ 5633) եւ Կալկաթայի Մարդասիրաց ճեմարանի (օր.՝ նկարագրություն

Ամ 6765), հայրենի եւ օտար գիտնականների հետ ճեմարանականների հանդիպումների ու դասախոսությունների (օր.՝ նկարագրություն Ամ 231), հանդեսների եւ այլազան միջոցառումների, Հոգեւոր ճեմարանի կյանքում կարեւոր տեղ ունեն ավարտաճառերի (օր.՝ նկարագրություն Ամ 313) եւ վարդապետական թեզերի (օր.՝ նկարագրություն Ամ 2518) պաշտպանությունների վերաբերյալ ծանոթագրություններ, որոնց շնորհիվ իմանում ենք, թե գիտական ինչ թեմաներ են արծարծել-մշակել ուսանողները եւ հոգեւորականները, երբ են կատարվել միջոցառումները, հանդիպումները, ավարտաճառերի պաշտպանությունները եւ դրանց թեմաները (էջ 11):

Ամսագիրը հետեւողականորեն անդրադարձել է թե՛ հայրենիքում եւ թե՛ սփյուռքում կատարված ձեռնադրություններին (օր.՝ նկարագրություն Ամ 2592), ի Տեր հանգած հոգեւորականների մահագրականներին (օր.՝ նկարագրություն Ամ 2705), որոնց նկարագրության մեջ ծանոթագրվում է ձեռնադրության եւ կամ մահվան, ժողովների, Գերագույն հոգեւոր խորհուրդի գումարման (օր.՝ նկարագրություն Ամ 3152), տարատեսակ հարցերի, կարգալուծությունների (օր.՝ նկարագրություն Ամ 499) եւ այլնին վերաբերող վճիռների օրը, ամիսը եւ տարին: Այսպեսակ տեղեկությունները կարեւոր արժեք ունեն՝ առանց ամսագիրը բացելու ճշտել որեւէ մեկի ձեռնադրության կամ մահվան եւ կամ որեւէ ժողովի կամ վճռի ու կարգալուծության օրը (էջ 11):

Մատենագիտության հեղինակը փորձել է հնարավորին չափ հարազատ մնալ «Արարատ»-ի եւ «Էջմիածնի» մատենագիտությունների սկզբունքներին (էջ 11), որպեսզի օգտվողի համար անտեղի դժվարություններ չառաջանան եւ խուսափի նախորդ մատենագիտությունների հնարավոր տարբերություններից: Ինչպես նաեւ հեղինակը փորձել է չկրկնել ամսագրի նախորդող մատենագիտությունների սխալները[4] (էջ 12):

Տ. Արարատ քին. Պողոսյանը հետեւել է մատենագիտությունների կազմման ժամանակագրական-այբբենական սկզբունքին[5]. ըստ տարիների, ամեն տարվա մեջ՝ հեղինակների եւ անհեղինակ միավորների վերնագրերի այբենական կարգով (էջ 11):

Մատենագիտության 8239 նկարագրությունների ճնշող մեծամասնությունն ունի ծանոթագրություն, որտեղ ներկայացված են հոդվածներում առկա ենթավերնագրերը (Ռվնդ. հապավումով) (էջ 12): «Արարատ»-ի եւ «Էջմիածին» ամսագրի առաջին 30-ամյակի մատենագիտությունների մեջ սրանք բերվել են մասնակիորեն եւ կամայականորեն, իսկ ներկա մատենագիտության մեջ հեղինակը նյութի մեջ առկա բոլոր ենթավերնագրերը վերարտադրել է (օր.՝ նկարագրություն Ամ 526), որպեսզի ընթերցողն ամբողջական պատկերացում ստանա հրապարակման վերաբերյալ: Ի դեպ, որպեսզի ծանոթագրություններում առանձնանա բուն հոդվածագրի ենթավերնագրերը եւ իր՝ մատենագիտության կազմողի ծանոթագրությունները, վերջիններս սկսվում են նոր տողից (օր.՝ նկարագրություն Ամ 595): Նոր տողից դրված ծանոթագրություններով հեղինակը

4 «Էջմիածին» ամսագրի նախորդող մատենագիտության մեջ եղած թերությունների մասին տե՛ս **Խ. Աղաջանյան,** «Էջմիածին» ամսագրի մատենագիտական ցանկը, «Էջմիածին», 1974, ԺԲ., էջ 52-54:

5 Նշյալ սկզբունքի լրջության եւ ժամանակի ընթացքում կյանքի քննությունը բռնած լինելու մասին տե՛ս **Խ. Աղաջանյանի** նշված հոդվածը (էջ 53):

փորձել է առավել հստակ պատկերացում տալ այն հոդվածների մասին, որոնց վերնագրերը լիովին չեն բացահայտում նրանց բովանդակությունը (էջ 12):

Ամսագրի յուրաքանչյուր համար ունի «Մայր Աթոռում», հեփրագայում, «Եկեղեցական բեմ. լուրեր» բաժինը, որտեղ արտացոլված նյութերը նախորդ մատենագիտութիւններում արված են կամայական ընտրությամբ՝ երբեմն անկարեւոր համարելով ու բաց թողնելով տարբեր օրերի եւ հանդիսությունների նկարագրություններ: Իսկ հեղինակը համառոտ կերպով մեջբերել է դրանք բոլորը՝ հաղորդումների կարեւորությունը որոշելը թողնելով ընթերցողին եւ ապագային, որպեսզի ամսագիրը ձեռքի տակ չունեցողն իմանա կատարված ամեն ինչի մասին՝ թե այսինչ օրն ի՞նչ է տեղի ունեցել Մայր Աթոռում կամ հոգեւոր ճեմարանում, ո՞վ է այցելել Մայր Աթոռ, ո՞վ է այստեղ պատարագել եւ այլն (օր.՝ նկարագրություն ՀՁ 673) (էջ 12): Պետք է ասել, որ այս բաժինը նախապես ամսագրում եղել «Մայր Աթոռում, Եկեղեցական բեմ. լուրեր» խորագրով, սակայն տարիների ընթացքում ամսագրի խմբագրակազմի փոփոխության հետեւանքով խորագրից դուրս մնաց «Մայր Աթոռում» հատվածը՝ թեեւ բովանդակությունը մնաց նույնը, սակայն որպեսզի այս նյութերը զետեղվեն մի տառի («Մ») տակ, հեղինակը անկյունավոր փակագծերի մեջ վերականգնել է [Մայր Աթոռում] խորագիրը (օր.՝ նկարագրություն ՀՁ 1991):

Ամսագրում հաճախ կարելի է հանդիպել «Թեմական կյանք» եւ «Էկումենիկ կյանք» խորագրերի, որոնց ներքո եղած հոդվածները մեծավ մասամբ անհեղինակ են: Մատենագիտության հեղինակն այս խնդիրը լուծել է հետեւյալ կերպ. եթե նյութերը հեղինակի կամ դիվանի ստորագրություն չունեն, զետեղված են նշյալ խորագրերի տակ (օր.՝ նկարագրություն ՀՁ 1235), իսկ եթե ստորագրված են եւ հեղիակի անուն ունեն, ապա նկարագրված են հեղինակի անվան ներքո: Ինչպես յուրաքանչյուր ամսագրում, այնպես էլ «Էջմիածին» ամսագրում որոշ հոդվածագրեր հանդես են եկել ծածկանուններով, անձնանունների կրճատ գրության ձեւերով, իսկ հաշվի առնելով համայնավարության տարիներին եղած խիստ գրաքննությունը եւ կրոնական ամսագրին թղթակցելու «հետեւանքները» նույնիսկ որոշ հեղինակներ հանդես են եկել ընդհանրապես այլ ազգանունով (օր.՝ նկարագրություն ՀՁ 935): Մատենագիտության կազմման ժամանակ հեղինակը փորձել է հնարավորության դեպքում վերականգնել հեղինակների կրճատ գրված (օր.՝ նկարագրություն ՀՁ 1560) կամ ընդհանրապես չգրված անունները (օր.՝ նկարագրություն ՀՁ 1188):

Ամսագրում հրատարակվել են տարբեր հեղինակների բազմաթիվ հոդվածաշարեր. վերջիններիս նկարագրությունն արվել է ըստ տարիների: Օրինակ, եթե որեւէ հեղինակի հոդվածաշարը լույս է ընծայվել մեկ տարվա տարբեր համարներում, ապա նույն տարվա շարքում այն ստացել է մի նկարագրություն, իսկ եթե հոդվածաշարը շարունակվել է նաեւ հաջորդ տարի, ապա այն նոր համարով նորից է նկարագրվել՝ այս անգամ արդեն տվյալ տարվա մեջ (էջ 12):

Արդեն խոսվեց, որ ամսագիրը հաճախ է անդրադարձել մահագրականների եւ կենսագրականների: Մատենագիտության մեջ նկարագրման գլխավոր սկզբունքներից է հոդվածագրերին ներկայացնել ազգանուն անուն հաջորդականությամբ: Սակայն հա-

ճախ կենսագրականների եւ մահագրականների դեպքում գրված է անուն ազգանունը՝ հատկապես հոգեւորականների անունները գրելու պարագային, որը ունի իր հատուկ ընդունված ձեւը: Դահպանելով նկարագրման հիմնական սկզբունքը՝ հեղինակը այսպիսի դեպքերում հրապարակումը ցանկել է ազգանուն-անուն կարգով (օր.՝ նկարագրություն ՀՄՔ 951) (էջ 12):

«Էջմիածին»-ը լինելով նախեւառաջ կրոնական մասագիր, հաճախ տպագրել է քարոզներ: Մատենագիտության կազմողը օգտվողի գործը դյուրացնելու համար քարոզի բովանդակության մասին պատկերացում տված լինելու նպատակով նկարագրությունների մեջ բերել է նաեւ բնաբանները (օր.՝ նկարագրություն ՀՄՔ 1058), իսկ այն դեպքերում, երբ նկարագրության մեջ հստակ ասված է, թե որ տոնին կամ ինչ առիթով է խոսվել քարոզը բնաբանը չի ներկայացվել (օր.՝ նկարագրություն ՀՄՔ 1385): Բացի նշվածներից ամսագրում եղել են նաեւ անբնաբան, այլեւ վերնագրերի մեջ բովանդակությունը չարտացոլող քարոզներ. այսպիսի դեպքերում արժանապատիվ Տեր Հայրը քարոզն ընթերցել եւ շատ համառոտ բնորոշել-ծանոթագրել է նրա պարունակությունը: Բացի այս ամենից՝ ամեն քարոզի նկարագրության վերջում, ըստ ամսագրի տված հնարավորության, նշել է քարոզի խոսվելու օրը, ամիսը եւ տարին (օր.՝ նկարագրություն ՀՄՔ 2143): Վերջին եղանակը կիրառել է նաեւ հաղորդագրությունների, հայրապետական վճիռների, այցելությունների, կարգալուծությունների եւ այլ նմանատիպ նկարագրությունների մեջ՝ այսպիսով մատենագիտությանը տալով նաեւ օրացուցային արժեք (օր.՝ նկարագրություն ՀՄՔ 208) (էջ 12):

Մատենագիտության խմբագրականում նշվում է, որ պարբերականի մատենագիտությունը նրա բանալին է, եւ եթե այն չկա, ապա պարբերականը կողպված գանձարան է, սակայն մատենագիտությունն էլ ունի իր բանալին, որ նրա օժանդակ ցանկերն են:

Այս գիտակցումով եւ առկա ավանդույթը պահպանելով՝ հեղինակը կազմել է անհրաժեշտ օժանդակ ցանկերը. Առարկայական (էջ 417), Անձնանունների, Հեղինակների եւ Թարգմանիչների (էջ 430), Տեղանուններ (էջ 465), որոնց վերջում առանձին շարքով՝ Վանքերի, Եկեղեցիների եւ Անապատների անունների ցանկը (էջ 474), որոնք շատ օգտակար են փնտրվող հեղինակը, նյութը, տեղանունը արագ գտնելու տեսանկյունից (էջ 12): Ներկա մատենագիտության մեջ, ի տարբերություն նախորդների, որոնցում հեղինակի, անձնանունի եւ թարգմանչի համար առանձին ցանկեր են կազմվել, որոնք դժվարացնում են մեկ մարդու մասին եղած նյութը արագ եւ շուտ գտնելուն, ապա, ներկա մատենագիտության մեջ անձնանունները զետեղված են մեկ ցանկի մեջ, այսինքն որեւէ անուն ազգանվան տակ կարող եք գտնել եւ փնտրվող հեղինակի հոդվածը, եւ նրա կատարած թարգմանությունը եւ թե նրա մասին եղած նյութը, որոնք իրարից տարբերվում են համարների վրա եղած տարբերանշաններով (+*):

Պետք է ասել, որ ինչպես յուրաքանչյուր նմանատիպ ծավալուն եւ աշխատատար գործ, ներկա մատենագիտությունը եւս չէր կարող զերծ լինել սխալներից, վրիպումներից եւ թերություններից: Սակայն մենք չենք կենտրոնանան մատենագիտության թերություններին, քանզի հեղնակը մատենագիտության «Առաջաբանում» բարեխճորեն անդ-

բաղարձել է իր սխալներին, թերություններին եւ վրիպումներին, որոնք սակայն ցավոք հնարավոր չի եղել շտկել, որովհետեւ եղած վրիպակների շտկման դեպքում հիմնովին կխախտվեին թե՛ նկարագրությունների համաբակարգը եւ թե՛ եւ արդեն պատրաստի անվանացանկերը: Ուստի հեղինակը նկատված վրիպակները ներկայացրել է առանձին (էջ 12-13):

Բացի հեղինակի նկատած վրիպակներից ու թերություններից կան եւս որոշ դիտողություններ, որն վստահաբար չեն արժեզրկում կատարված հսկայական աշխատատար եւ ժամանակատար այս աշխատանքի արժեքը: Եվ ինչպես հեղինակն ինքն է հույս հայտնում՝ նկատված վրիպակներն ու թերությունները պետք է օգնեն, որպեսզի այս արժեքավոր աշխատանքի վերահրատարակման ժամանակ այն դարձնեն ավելի կատարյալ:

Վստահորեն կարող ենք ասել, որ այս արժեքավոր աշխատանքը հեղնակի լուման պետք է լինի հայագիտության մեջ եւ լիահույս ենք, որ այս աշխատանքը առավել կատարյալ կերպով կվերահրատարակվի 2014 թվականին՝ ընդառաջ «Էջմիածին» ամսագրի հրատարակման 70-ամյակին՝ իր մեջ ներառելով նաեւ ամսագրի մատենագիտության առաջին 30-ամյակի եւ ներկա հատորները:

Վստահ ենք, որ հընթացս այս նպատակի իրագործման՝ կարեւորագույն քայլերից մեկը պետք է համարել կրոնական եւ հայագիտական հանդեսների մատենագիտությունների շարքում իր ուրույն տեղն զբաղեցնող «Էջմիածին» ամսագրի ներկա մատենագիտությունը:

ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
պրոֆեսոր